# ԱԶԳԱՅԻՆ

## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ Ի ԾԻՐԱՆԱՒՈՐ ՎԱՆՍ

Ի 5-ն ամսոյս Վեհ. Կաթողիկոս գնաց յայցելութիւն Ծիրանաւորի վանուց ի Կրծանիսն Տփխիսայ։

## ՎԵՀ. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ի 10-ն ամսոյս յաւուր ուրբաթու՝ Մեծ. Պ. Աղեքսանդր Թահիրեանցի Կրծանիսու այգւոյ տունէն մեկնեցաւ Ս. Կաթողիկոս եւ եկն ի Մայր վանս Տփխիսայ։

Այս առթիւ մեր շնորհակալութիւնը կը յայտնեմք Մեծ. Պ. Աղեքսանդրի Թահիրեանց։

## ՆՊԱՍՏ

Յանցելում ամի ի Բերա Կ. Պոլսոյ պատահած հրկիզութենէ մեծապէս վտանգեալ աղքատ եւ թշուառ մերազնէից ի նպաստ՝ ըստ որդեսէր խնամոց եւ տնօրէնութեան Վեհ. Կաթողիկոսի ամենայն Հայոց՝ Ռուսաստանի ազգայիններէն մինչեւ ցարդ հաւաքեալ նուէրները [illegible] հազար ութսուն եւ եօթն մանէթ՝ առաքեցաւ ի ձեռն Ռուսաց Վսեմ. դեսպան Իգնաթիէվ զօրապետի, ի Պատրիարքարանն Հայոց Պոլսոյ, որպէս զի ըստ բաղձանաց Ս. Հայրապետին՝ ինչպէս յատուկ կոնդակաւ եւս գրուած է՝ Գեր. Ս. Պատրիարքը եւ Ազգային ժողովը կազմելով մի Մասնաժողով՝ Նորին ձեռամբ եւ տնօրէնութեամբ բաժանուի նոյն հրկիզեալներէն կարօտ եւ աղքատ ազգայնոց մերոց։ Յետ սակաւուց երբ ամբողջանայ նուիրատուաց անուանց ցուցակները՝ կը փութամք հրատարակել՝ ինչպէս խոստացած եմք։

## ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ Ի ՆՊԱՍՏ ՇԻՆՈՒԹԵԱՆՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ

(Շարունակութիւն։)

### ՕՐԲԱԶԱՐ

| | ռ. | կ. |
|---|---|---|
| Մանիա Կոպչակեանց | | 25 |
| Նունիա Կոպչակեանց | | 25 |
| Գէորգ Նալպանդեանց | | 50 |
| Հռիփսիմէ Մելգոնեան | | 20 |
| Թագուհի Մելգոնեան | | 10 |
| Եղիսաբէթ Սահաթեան | | 10 |
| Լուսեղէն Վարդերեսեան | | 20 |
| Սիմէոն Ակոբեան | | 30 |
| Յովհաննէս Խոռոզեան | | 50 |
| Պետրոս Խոշայօզեան | | 25 |
| Պարոն Տալտապանեան | | 20 |
| Յարութիւն Թամամեան | | 50 |
| Պապուկ Ակոբեան Քամենչիքեան | | 30 |
| Պապիճան Քուվուչեցեան | | 50 |
| Օգսենտիոս Քահ. Կոպչակճեան | 3 | 70 |

### ԹԷՈԴՈՍԻԱ

| | ռ. | կ. |
|---|---|---|
| Եղբարք Ալթունճի | 5 | |
| Աղէքսանդր Ալէանախեան | 3 | |
| Կարապետ Քուպեան | 1 | |
| Յակոբ Քէշիշեան | 1 | |
| Լուսեղէն Անդրէասեան | | 50 |
| Սարգիս Տիգրանեան | » | |
| Գրիգոր Տէլվէթեան | 50 | |
| Գաբրիէլ Ստամպօլցի | | 50 |
| Կարապետ Քէլեան | | 50 |
| Յովհաննէս Տէր Աբրահամեան | 3 | |
| Գրիգոր Վարդապետ Աղափիրեան | 5 | |
| Մարտիրոս աւագ Քահանայ Տէր Դաւթեան | 3 | |

ԱԽԱԼՑԽԱՑ

| Name | Amount |
|---|---|
| Վարդան Վարդանեանց | 20 |
| Կարապետ Մուլթաֆեանց | 20 |
| Մկրտիչ Յակովբեան | 20 |
| Մանուկ Պայպուրդցեանց | 10 |
| Կարապետ Աշնաւուրեանց | 5 |
| Ներսէս Մսրլեան | 5 |
| Պետրոս Ձելէնկարեան | 5 |
| Պետրոս Բիսպայպրեան | 5 |
| Բագրատ Պօղօեանց | 5 |
| Յակոբ Սաղաթելեանց | 5 |
| Յովհաննէս Սողոմոնեանց | 5 |
| Յովհաննէս Մեսէնձեանց | 6 |
| Մելգոն Ձիլինկարեանց | 5 |
| Յարութիւն Քացախեանց | 5 |
| Գրիգոր Ղալէմքերեանց | 5 |
| Սարգիս Մ. Սահակեանց | 3 |
| Սարգիս Յարօյեանց | 3 |
| Նազարէթ Ալբերթեանց | 5 |
| Գասպար Մելգոնեան | 5 |
| Յակովբ Ղանթարձեան | 5 |
| Մկրտիչ Անիսոնեանց | 1 |
| Յովակիմ Ասլանեանց | 1 |
| Յակոբ Չիտեմեանց | 3 |
| Պետրոս Ն. Հանուտձեանց | 5 |
| Գրիգոր Ջարսկեան | 5 |
| Գէորգ Պօղուխլօղլեանց | 2 |
| Պաղտասար Մովսէսեան | 3 |
| Կիրակոս Յարութիւնեան | 5 |
| Յովհաննէս Գարակեանց | 3 |
| Յակովբ Չաթալբաշեանց | 4 |
| Մկրտիչ Մովսէսեանց | 1 |
| Յովհաննէս Ղարայանեանց | 5 |
| Կարապետ Աշամեանց | 3 |
| Կարապետ Յարութիւնեանց | 1 |
| Ադամ Պետրոսեան | 1 |
| Պետրոս Ոսկանեանց | 5 |
| Յովհաննէս Դաւրանեանց | 2 |
| Կարապետ Գարօյեանց | 1 |
| Մարտիրոս Ասլանեանց | 1 |
| Մանուկ Գիւլբէնկեանց | 1 |
| Մարտիրոս Կարապետ Տէր Մարգարեանց | 3 |

| Name | Amount | |
|---|---|---|
| Աւետիս Հայրապետեանց | 1 | |
| Աղարէկ Եայլախանեանց | 1 | |
| Յարութիւն Շիրինեանց | | 50 |
| Յարութիւն Մուրատեանց | 1 | |
| Նազարէթ Արէլեան | 1 | |
| Յակոբ Պախչինեան | 2 | |
| Աղէքսանդր Գասպարեան | | 40 |
| Յարութիւն Սիրունեանց | 1 | |
| Իսահակ Բագրատեան | 2 | |
| Պետրոս Յովակիմեան | 1 | |
| Տիգրան Տէր Միքայէլեան | | 60 |
| Յ. Յարութիւնեանց | 1 | |
| Յակոբ Ենկօյեանց | 1 | |
| Սարգիս Խաչատուրեան | 1 | |
| Նիկողայոս Տէր Գրիգորեանց | 2 | |
| Դիոնեսիոս Աստուածատրեան | 2 | |
| Աղէքսանդր Բերակեան | 3 | |
| Կարապետ Մոհրապեան | 1 | |
| Աբրահամ Եսքսիւզեանց | 1 | |
| Յովհաննէս Մանուկեան | | 50 |
| Աբրահամ Սահակեան | 1 | |
| Կարապետ Մաթէոսեան | | 45 |
| Մարտիրոս Պօղոսեան Պայպուրդցեան | | 40 |
| Սարգիս Անանիկեանց | 1 | |
| Յակոբ Ղասապաշեանց | 3 | |
| Յովհաննէս Պապեանց | 5 | |
| Գրիգոր Բագրատունեանց | 5 | |
| Մահ. Մկրտիչ Մուրատեանց | 3 | |
| Սիմէօն Սիրունեանց | | 50 |
| Մկրտիչ Պուռունսուզեան | | 30 |
| Աւետիս Աղապապեան | | 85 |
| Մկրտիչ Յակովբեան | | 30 |
| Աղաձան Ըռահմաթեան | | 60 |
| Բարեպաշտօն Ոսկերիչք Ախալցխոյ | 10 | 61 |
| Բարեպաշտօն Կօշկակարք Ախալցխոյ | 5 | |
| Բարեպաշտօն Մետաքսագործք Ախալցխոյ | 20 | |
| Բարեպաշտօն Թիւթիւնճիք Ախալցխոյ | 5 | |
| Բարեպաշտօն Մրգածախք Ախալցխոյ | 10 | |
| Բարեպաշտօն Սափրիչք Ախալցխոյ | 3 | |
| Բարեպաշտօն Դարբինք Ախալցխոյ | 6 | |
| Բարեպաշտօն Պայտարք Ախալցխոյ | 4 | |
| Բարեպաշտօն Դերձակք Ախալցխոյ | 7 | |
| Բարեպաշտօն Խաղաղորդք Ախալցխոյ | 7 | |

| | | |
|---|---|---|
| Բարեպաշտօն Մանրածախք Ախալցխոյ | 5 | 70 |
| Բարեպաշտօն Օղավաճառք Ախալցխոյ | 15 | |
| Բարեպաշտօն Սուրճավաճառք Ախալցխոյ | 3 | |
| Բարեպաշտօն Կտաւագործք Ախալցխոյ | 2 | 42 |
| Բարեպաշտօն Սառաճք Ախալցխոյ | 3 | |
| Բարեպաշտօն Մխճիք Ախալցխոյ | 2 | |
| Բարեպաշտօն Որմնադիրք Ախալցխոյ | 5 | |
| Մարտիրոս Ըռահմաթեան | 1 | |
| Յակոբ Գրիգորեան | | 25 |
| Յարութիւն Գալուստեան | | 40 |
| Մարտիրոս Պետրոսեան | | 20 |
| Յովհաննէս Քաշօրեան | | 60 |
| Պօղոս Գալուստեան | | 50 |
| Սարգիս Յարութիւնեան | 1 | |
| Սողոմոն Ստեփանեան | | 50 |
| Յովհաննէս Միրզոնեան | | 50 |
| Յարութիւն Արէլեան | 1 | |
| Յովհաննէս Փիլինեան | 1 | |
| Աղա Փիլինեան | | 25 |
| Գէորգ Ստեփանեան | | 70 |
| Գրիգոր Մաթէոսեան | | 50 |
| Գրիգոր Խաչատրեան Բենկլեանց | | 20 |
| Երեք անձինք | 1 | |
| Յակոբ Սահակեան | | 80 |
| Աբրահամ Զուլամեան | 1 | |
| Ստեփանոս Սարգսեան | | 30 |
| Բարեպաշտօն Բրուտք Ախալցխոյ | 2 | 50 |
| Բարեպաշտօն Մսածախք Ախալցխոյ | 5 | |
| Բարեպաշտօն Հիւսք Ախալցխոյ | 8 | |
| Աւետիս Փչրեան | | 30 |
| Բարեպաշտօն Պղնձագործք Ախալցխոյ | 4 | |

(Շարունակելի:)

## ԴՊՐԵՎԱՆՔ ԵՐՆՋԱԿՈՒ Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՈՒՑ

### Խմբագրութեան Արարատ ամսագրոյ:

Եթէ միանգամ տրամաբանօրէն ազգաց և ազանց անցեալի և ներկայի վերայ ուշք դարձնենք՝ կ'տեսնենք անշուշտ պարզ կերպով թէ նոցա իւրաքանչիւրը ունեցած է և ունի՝ իւր ազգայնութեան տևողութեան վերաբերմամբ բնական և բարոյական կապեր, որոնք իւրեանց ընդարձակ նշանակութեամբ նոյն հասարակութեան կենաց ընթացքին կամ վնասակար և կամ օգտակար են եղած. Մի ազգի բնական կապերը քաջ ըմբռնելու համար՝ հարկ է աշխարհագրական գիտութիւնը իւր մասներով գիտենալ՝ հետևապէս և տեղեակ ըլլալ ընդհանրական պատմութեան.

Արդ այս գիտութեանց մէջ նշանակութիւն և համբաւ ստացող անձինք՝ շատ անգամ առարկած են թէ,, Հայաստանը մարդկային ազգի պատմութեանական կեանքին մէջ մի շատ երևելի գործք չկատարեց և ոչ մի ժամանակ ալ կատարել և հզօր տէրութիւն չկազմեց,,. Այս կէտը մենք խոհեմ և հեռատես ձևով նկատելով կարող ենք անվեհեր ասել թէ դորան առիթն մեր Հայրենեաց բնական դրութիւնն կամ կապն է եղած. Հայկական կեանքը գէթ մասնաւոր կերպով ուսումնասիրող ամեն անհատ գիտէ թէ մեր բուն Հայրենիքը մի բարձրաւանդակ երկիր է՝ Կովկաս, Տաւրոս և Կորդուաց լեռներէն շրջապատեալ, որոնք իրանց՝ այլևայլ ճիւղերով՝ այս աշխարհքին մէջ միանալով՝ ոչ միայն Ասիոյ ամենանշանաւոր բարձրաւանդակութիւնը կ'կազմեն, հապա և այս երկիրը բոլորովին միմեանցից ջոկ մասերի կ'բաժանեն. որ մեծ նշանակութիւն ունեցաւ մեր պատմութեանական կեանքին մէջ.

Ասիայումը Ասորեստան, Բաբելաստան, Մարաստան, նոյնպէս Եգիպտոս ոչ միայն Հայաստանի նման զատուած չէին բնական անջրպետներով իւրեանց մէջ. Այլև ազատ էին օտարների ազդեցութիւններէն. Ուրեմն բնական և շատ յարմար էր թէ այն երկրները պիտի կազմէին հզօր տէրութիւններ, ինչպէս և եղան հին դարերին մէջ. Իսկ մեր Հայրենիքն այս աշխարհներին հակառակ դըրութիւն ունենալով այսինքն իւր մէջ բաժանեալ և այլ և այլ ազգաց ոտից կոխան լինելու վիճակին ենթարկեալ լինելով ոչ միայն կատարեալ միութիւն չ'ունեցաւ, հապա և խաղաղ ու անդորր կեանք ալ չ'վարեց.

Հարկ է միանգամ պատմութեան վերայ ուշք դարձնել. Ի՞նչ կ'տեսնենք. Այն թէ ամենայն ժամանակ համայն հզօր տիրապետների առաջին բացուած երկիրը՝ մեր Հայրենիքն է եղած. Ուստի